ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/2024

«Հանրակրթության պետական նոր չափորոշչով» պայմանավորված 2-րդ, 3-րդ դասարանների հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 10-ին հրավիրված արտահերթ նիստի: Նիստին մասնակցեցին հանձնաժողովի չորս անդամ և քարտուղարը:

Հանձնաժողովի նիստի վայրը՝	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ք.Երևան, Վ.Սարգսյան 3
Հանձնաժողովի նիստի սկիզբը՝	2024 թվականի ապրիլի 10, ժամը 17:00
1. Արաքսիա Սվաջյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ /հանձնաժողովի նախագահ/
2. Թամարա Սարգսյան	Նախարարության հանրակրթության վարչության պետ /հանձնաժողովի անդամ, գնահատող/
3. Ստալ Սարդարյան	Նախարարության հանրակրթության վարչության հանրակրթական և արտադպրոցական հաստատությունների համակարգման բաժնի պետ /հանձնաժողովի անդամ, բացող/
4. Թամարա Գյոզալյան	Նախարարության ֆինանսաբյուջետային վարչության կրթական ծրագրերի ֆինանսավորման բաժնի պետ /հանձնաժողովի անդամ, գնահատող/
5. Ռուզան Սաֆարյան	Նախարարության հանրակրթության վարչության հանրակրթական և արտադպրոցական հաստատությունների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ /հանձնաժողովի անդամ, բացող/
6.Կարինե Բաբայան	Նախարարության հանրակրթության վարչության փորձագետ /հանձնաժողովի քարտուղար/

Հանձնաժողովի նիստի օրակարգի հարցեր.

Հարց 1. «Հանրակրթության պետական նոր չափորոշչով» պայմանավորված 3-րդ դասարանի «Ֆրանսերեն» առարկայի դասագրքի ստեղծման նպատակով դրամաշնորհային մրցույթ հայտարարելու մասին:

Հարց 2. 3-րդ դասարանի «Ֆրանսերեն» առարկայի դասագրքի ստեղծման հայտահրավերի տեքստի նախագծի քննարկում, հաստատում, armeps (www.armeps.am) էլեկտրոնային համակարգի միջոցով տեքստի հրապարակում:

Հարց 3. Դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի հաջորդ նիստի ժամանակացույցի սահմանում:

Օրակարգի 1-ին հարց.

«Հանրակրթության պետական նոր չափորոշչի» ներդրմամբ պայմանավորված՝ 2024 թվականի ապրիլի 3-ին կայացավ 2-րդ և 3-րդ դասարանների հանրակրթական առարկաների նոր դասագրքերի ստեղծման նպատակով Նախարարության կողմից հայտարարված **«ՀՀԿԳՄՍՆԴՄ-01146» և «ՀՀԿԳՄՍՆԴՄ-001146»** ծածկագրերով դրամաշնորհային մրցույթների մասնակիցների կողմից armeps (www.armeps.am) էլեկտրոնային համակարգում մուտքագրված հայտերի բացումը: Մրցութային հանձնաժողովի կողմից կատարվեց ներկայացված փաթեթների ուսումնասիրություն: Արդյունքում պարզ դարձավ, որ 3-րդ դասարանի «Ֆրանսերեն» առարկայի դասագրքի ստեղծման հայտ չի ներկայացվել: Նախարարությունում խնդիրը քննարկվեց:

2024-2025 ուստարում սովորողներին ուսպլանով նախատեսված բոլոր դասագրքերով ապահովելու նպատակով, ինչպես նաև հաշվի առնելով հարցի կարևորությունը՝

Հանձնաժողովը 4 կողմ 0 դեմ հարաբերակցությամբ որոշեց՝

1. 3-րդ դասարանի «Ֆրանսերեն» առարկայի դասագրքի ստեղծման նպատակով հայտարարել նոր դրամաշնորհային մրցույթ:

Օրակարգի 2-րդ հարց.

Ներկայացվեց և մրցութային հանձնաժողովի կողմից քննարկվեց 3-րդ դասարանի «Ֆրանսերեն» առարկայի դասագրքի ստեղծման հայտահրավերի տեքստի նախագիծը, որը հավանության արժանացավ:

Հանձնաժողովը 4 կողմ 0 դեմ հարաբերակցությամբ որոշեց՝

1. Հաստատել 3-րդ դասարանի «Ֆրանսերեն» առարկայի դասագրքի ստեղծման դրամաշնորհային մրցույթի մասին հայտահրավերի տեքստը և 2024 թվականի ապրիլի 11-ին մուտքագրել armeps (www.armeps.am) էլեկտրոնային համակարգ:
2. Իրազեկել հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությանը՝ դրամաշնորհի հատկացման մրցույթի հայտահրավերը տեղադրել Նախարարության պաշտոնական կայքէջում:

Օրակարգի 3-րդ հարց.

Ներկայացվեցին դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի առաջիկայում նախատեսվող աշխատանքները:

Հանձնաժողովը 4 կողմ 0 դեմ հարաբերակցությամբ որոշեց՝

1. Մրցութային հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության:

Հանձնաժողովի նախագահ — Արաքսիա Սվաջյան

Հանձնաժողովի անդամներ՝ — Թամարա Սարգսյան

Ստալ Սարդարյան

Թամարա Գյոզալյան

Ռուզան Սաֆարյան

Հանձնաժողովների քարտուղար՝ — Կարինե Բաբայան